Գործում է 24.06.26 թվականից
Տեղեկատվական ամփոփագրում նշված պայմանները գործարքի կատարման պահին կարող են փոփոխված լինել:

Մանրամասների համար ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ,
Նալբանդյան 48, ք. Երևան 0010, ՀՀ,
Հեռ.՝ +(37410) 59 20 20
Ինտերնետային կայք՝ www.amiobank.am, Էլ. փոստ՝ info@amiobank.am

Ավտոկայանատեղերի ձեռքբերման նպատակով տրամադրվող սպառողական վարկ

Տեղեկատվական ամփոփագիր

1.	Ընդհանուր պայմաններ	
1.1	**Վարկի տեսակ**	Ավտոկայանատեղերի ձեռքբերման նպատակով տրամադրվող սպառողական վարկ
1.2	**Տրամադրման ռեսուրս**	Բանկի սեփական ռեսուրս
1.3	**Վարկի նպատակ**	ՄԼ Մայնինգ ՍՊԸ կողմից կառուցվող/կառուցված և «Հրաչ Ռուբեն» ՍՊԸ կողմից՝ «ՀՀ, ք. Երևան, Աճառյան 37/1» հասցեում կառուցվող/կառուցված ավտոկայանատեղերի ձեռքբերում
1.4	**Վարկի ձևակերպման վայր**	Բանկի մասնաճյուղեր և «Նալբանդյան» սպասարկման կենտրոն
1.5	**Արժույթ**	ՀՀ դրամ
1.6	**Վարկի առավելագույն գումար**	10,000,000 ՀՀ դրամ
1.7	**Վարկի նվազագույն գումար**	1,000,000 ՀՀ դրամ
1.8	**Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք**	14,9%
1.9	**Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույք**	16,14%
1.10	**Տարեկան անվանական տոկոսադրույքի վերանայման պայմաններ**	Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը սահմանվում է հաստատուն ճշտգրտվող տոկոսադրույք
		ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Հաստատուն (ճշգրտվող) տոկոսադրույքը կարող է վերանայվել սկսած 37-րդ ամսից և վարկային պայմանագրի գործողության ընթացքում չի կարող վարկի տրամադրման պահին սահմանված տոկոսադրույքի համեմատ նվազել կամ աճել ավելի քան 2.5 տոկոսային կետով : Հաշվարկման համար հիմք է հանդիսանում AMIO-հաշվարկային դրույքի սահմանման և փոփոխման կարգը:
1.11	**Վարկի նվազագույն ժամկետ**	6 ամիս
1.12	**Վարկի առավելագույն ժամկետ**	120 ամիս
1.13	**Տոկոսագումարների հաշվարկման կարգը**	Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով
1.14	**Վարկի մարման եղանակ**	Անուիտետային
1.15	**Վարկի տրամադրման եղանակ**	Միանվագ, անկանխիկ, Բանկում գործող վարկառուի հաշվեհամարին
1.16	**Նվազագույն կանխավճար**	Ավտոկայանատեղիի գնի 20%-ը 50% և ավել կանխավճար կատարելու դեպքում եկամուտների վերլուծություն չի կատարվում
1.17	**Վարկ/գրավ հարաբերակցություն**	Առավելագույն 80%
1.18	**Վարկային հայտի ուսումնասիրության վճար**	սահմանված չէ
1.19	**Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար)**	սահմանված չէ
1.20	**Վարկի սպասարկման ամսական միջնորդավճար**	սահմանված չէ
1.21	**Վարկառուի/Համավարկառուի կողմից վարկային պարտավորությունների չկատարելու դեպքում գանձվող տույժեր և բացասական հետևանքներ**	**Վարկառուի/Համավարկառուի կողմից վարկային պարտավորությունների չկատարելու դեպքում Բանկն իրավունք ունի՝** • **Կիրառել տույժ՝ ժամկետանց տոկոսագումարի և ժամկետանց վարկի նկատմամբ 0.13%-ի չափով ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար:** • **Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝** *1)* **Տույժ/տուգանքներ** *2)* **Տոկոսագումարներ** *3)* **Մայր գումար** **ՎԱՐԿԱՌՈՒԻ/ՀԱՄԱՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 1 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՐԿԱՌՈՒՆ/ՀԱՄԱՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:**

		ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՎԱՐԿԱՌՈՒՈՒՅՆ/ՀԱՄԱՎԱՐԿԱՌՈՒՈՒՅՆ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:
		ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ՉԿԱՏԱՐԵՔ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:
1.22	**Վարկի վաղաժամկետ մարման պայմաններ**	**▪ Վարկառուն կարող է ցանկացած ժամանակ իրականացնել վարկի վաղաժամկետ մարում, որի համար տույժ/տուգանք չի կիրառվում:Վարկի վաղաժամկետ մարման դեպքում՝** **• ենթակա են նվազեցման Վարկի օգտագործված մասի նկատմամբ հաշվարկվող տոկոսների, միջնորդավճարների և սպասարկման վճարների ծախսը,** **• ենթակա չեն նվազեցման սույն պայմանագրի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված տուժանքները, Վարկի մարման և/կամ տոկոսների վճարման նպատակով կատարված փոխանցումների համար, ինչպես նաև այդ նպատակով բացված հաշիվների սպասարկման համար վճարված գումարները, նոտարական վավերացման, պետական գրանցման (նշված ծառայությունների առկայության դեպքում) դիմաց կատարված վճարները, հավելյալ՝ սույն Վարկի հետ կապ չունեցող, Վարկառուի ցանկությամբ ընտրված ապահովագրական ծառայությունների դիմաց կատարված ապահովագրավճարները:** **• Վարկի ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում ենթակա են վերադարձման նախապես վճարված, սակայն փաստացի չօգտագործված ամիսների/օրերի համար կատարված վճարները:** **(Ծախսերի նվազեցման պայմանը գործում է «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում տրամադրված մինչև 15,000,000 ՀՀ դրամ վարկերի/վարկային գծերի նկատմամբ):**
1.23	**Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացման ժամկետ**	Վարկի հաստատման/մերժման որոշումը կայացվում է Վարկառուի/Համավարկառուի կողմից փաստաթղթերի ամբողջական տրամադրումից հետո 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում: * բացառությամբ այն դեպքերի, երբ առաջանում է վարկային հայտի լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն:
1.24	**Վարկային հայտի որոշման մասին տեղեկացնելու կարգը և ժամկետը**	Վարկային հայտի վերաբերյալ որոշման արդյունքների մասին Վարկառուին/Համավարկառուին տեղեկացվում է 1(մեկ) աշխատանքային օրվա ընթացում՝ բանավոր կամ ցանկության դեպքում՝ նաև գրավոր:
1.25	**Մտածելու ժամանակ**	Վարկային պայմանագրի կնքումից առնվազն 7 օր առաջ առձեռն կամ փոստով Վարկառուին/Համավարկառուին տրամադրվում է վարկային պայմանագիր կնքելու առաջարկ և վարկային պայմանագրի նախագիծ: Վարկային պայմանագիր կնքելու առաջարկն ուժի մեջ է 7 աշխատանքային օր՝ Վարկառուին/Համավարկառուին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
1.26	**Վարկի տրամադրման մասին դրական որոշման գործողության առավելագույն ժամկետ**	Վարկի տրամադրման դրական որոշման կայացման օրվանից 30 (երեսուն) օրացուցային օր:
1.27	**Վարկառուին վարկի տրամադրման ժամկետ**	Գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում: * Բանկում տեխնիկական խնդիրների առկայության դեպքում վարկի տրամադրման ժամկետը կարող է երկարաձգվել, ինչպես նաև վարկի տրամադրում կարող է չիրականացվել Վարկառուի մոտ որևէ պարտավորության առկայության դեպքում՝ գերածախս, ժամկետանց պարտավորություններ, ՀԿԱԾ արգելանք և այլն:
2.	**Այլ միջնորդավճարներ**	
2.1	**Բանկային հաշիվների բացման/վարման, քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները**	Համաձայն"ԱՄԻՕ ԲԱՆԿ" ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների սպասարկման սակագների և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանների ու ժամկետների
2.2	**Վարկառուի/Համավարկառուի այլ ծախսեր**	✓ Անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի ստացման վճար՝ 10,000 ՀՀ դրամ ✓ Գործարքների նոտարական ձևակերպման հետ կապված ծախսեր (15,000-25,000 ՀՀ դրամ) ✓ Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսեր (սեփականության իրավունքի գրանցում՝ 45,000 ՀՀ դրամ, գրավի իրավունքի գրանցում՝ 27,000-28,000 ՀՀ դրամ)
3	**Վարկառուին/համավարկառուի նկատմամբ ներկայացվող պահանջներ և պայմաններ**	
3.1	**Վարկառու/ Համավարկառու**	• 21 տարին լրացած ՀՀ ռեզիդենտ անձ, ով ունի ՀՀ փաստացի կամ գրանցման հասցե և վարկի մարման ժամկետին տարիքը չի գերազանցում 70** տարին • Համավարկառուների քանակը չի կարող գերազանցել 2 անձը :

*** Վարկային դիմում-հայտի ուսումնասիրության ընթացքում պարզ է դառնում,որ վարկառուի/համավարկառուի 70 տարեկանը լրանալու դեպքում վարկի մայր գումարի 70% մարված է լինելու, ապա հայտը մերժման ենթակա չէ:**		
3.2	**Վարկառուի/Համավարկառուի եկամուտներ**	• Վարկառուի առաջնային և/կամ երկրորդային եկամուտներ, ըստ Հավելված 1. Այն դեպքում, երբ վարկառուի/համավարկառուի եկամուտները գոյանում են իր կողմից հիմնադրված ընկերությունից ստացվող աշխատավարձից՝ բանկը վերլուծում է վարկառուի/համավարկառուի առնվազն 12 ամսվա աշխատավարձի տվյալները, անհրաժեշտության դեպքում բանկը իրավունք ունի պահանջել և վերլուծել վարկառուին/համավարկառուին պատկանող ընկերությունների ֆինանսական տվյալները և աշխատավարձային եկամուտը փոխարինել շահութաբաժնով: * Եկամուտների հաշվարկը իրականացվում է համաձայն Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պայմանների:
3.3	**Վճարունակության գնահատման ընդհանուր սկզբունքը**	Ընդհանուր պարտքային վճարումների և զուտ եկամուտների առավելագույն հարաբերակցությունը (OTI գործակից) չպետք է գերազանցի 60%
3.4	**Վարկառուի/Համավարկառուի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ**	• Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին վարկառուի/համավարկառուի և վարկառուի ամուսնու/կնոջ գործող վարկային պարտավորությունները (վարկեր, երաշխավորություններ) չպետք է լինեն ժամկետանց կամ դասակարգված որպես չաշխատող: • Եթե վարկառուի/համավարկառուի մեկ վարկի գծով չվճարված պարտավորության չափը չի գերազանցում 1,000 /մեկ հազար/ ՀՀ դրամը, ապա տվյալ վարկը ժամկետանց չի համարվում • Վերջին 12 ամիսների (գործող և մարված) վարկերի ժամկետանց օրերի գումարային քանակը չպետք է գերազանցի 30 օրացույցային օրը, ընդ որում հիմք է ընդունվում մեկ ամսվա ընթացքում բոլոր վարկերի գծով միայն առավելագույն ժամկետանց վարկի օրերի քանակը
3.5	**Աշխատանքային ստաժի նկատմամբ պահանջ (պահանջվում է եկամտի աղբյուրը աշխատավարձ լինելու դեպքում)**	Գործող աշխատանքի վայրում՝ 3 ամիս անընդմեջ աշխատանքային փորձ:
4	**Գրավի առարկային ներկայացվող պահանջներ և պայմաններ**	
4.1	**Գրավի առարկա**	ՄԼ Մայնինգ ՍՊԸ կողմից կառուցվող/կառուցված և «Հրաչ Ռուբեն» ՍՊԸ կողմից՝ «ՀՀ, ք. Երևան , Աճառյան 37/1» հասցեում կառուցվող/կառուցված ավոտկայանատեղին (անշարժ գույքի ձեռք բերման իրավունքը)
4.2	**Գրավի առարկայի գտնվելու վայրը**	«Հրաչ Ռուբեն» ՍՊԸ՝ «ՀՀ, ք. Երևան , Աճառյան 37/1» , ՄԼ Մայնինգ ՍՊԸ՝ ՀՀ, ք. Երևան, Ադոնցի փ. 19/8, ՀՀ. ք. Երևան, Մ. Մելիքյան փողոց , թիվ 2/1, ՀՀ, ք. Երևան, Ադոնցի փ. 19/19, ՀՀ, ք. Երևան, , Մոնթե Մելքոնյան 16, ՀՀ, ք. Երևան, Ադոնցի փ. 19/9 ՀՀ, ք. Երևան, , Մալաթիա- Սեբաստիա վարչական շրջան, Բաբաջանյան փ. 42/5, 42/15,42/14, ՀՀ, ք. Երևան, Ադոնցի փ. 21/2:
4.3	**Գրավի առարկայի գնահատում**	Անշարժ գույքի գնահատում չի պահանջվում՝ հիմք է ընդունվում կառուցապատողի կողմից ներկայացված վաճառքի արժեքի մասին տեղեկանքը:
4.4	**Գրավի առարկայի և/կամ Վարկառուի/Համավարկառուի ապահովագրություն**	Չի պահանջվում
5	**Լրացուցիչ պայմաններ**	
5.1	**Վարկային հայտի մերժման գործոններ**	Բանկը կարող է մերժել վարկի տրամադրումը, եթե՝ ●Վարկառուի/Համավարկառուի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և/կամ տեղեկատվությունը ● Առկա է Վարկառուի/Համավարկառուի՝ վարկատեսակի պայմանների անհամապատասխանություն ●Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ վարկառուն/Համավարկառուն վարկունակ չէ ●ՀՀ ԿԲ Վարկային ռեգիստր և/կամ ԱՔՌԱ վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ Վարկառուն/Համավարկառուն ունի բացասական վարկային պատմություն: ●Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի է դարձել Վարկառուի/Համավարկառուի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում Վարկառուի/Համավարկառուի կողմից ներկայացված տեղեկությունը կամ վարկի վերադարձելիությունը: ● Առկա են Բանկի ներքին իրավական ակտերով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքեր
5.2	**Վարկային Հայտի հաստատման դրական գործոններ**	• Կայուն և բավարար եկամուտ • Դրական վարկային պատմություն • Ցածր պարտքային բեռ (պարտք/եկամուտ համարժեք հարաբերակցություն) • Պահանջվող փաստաթղթերի ամբողջականություն և ճշգրտություն

Ուշադրություն՝

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵՋ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԲՈԼՈՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՍՏՈՐԵՎ.

Բանկի կողմից տրամադրվող վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է համաձայն «Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բացատրություններ և օրինակներ» կանոնակարգ 8/01-ով սահմանված կարգի և «ՀՀ Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքի 13-րդ հոդվածով սահմանված հետևյալ բանաձևով.

	Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	***Փաստաթղթի ձևը***
1	Վարկառուի/համավարկառուի անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ)	Բնօրինակ
2	Սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ, բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից* (նույնականացման քարտ ներկայացնելու դեպքում՝ չի պահանջվում):	Պատճեն
3	Առկայության դեպքում ամուսնության վկայական/ամուսնալուծության վկաական/մահվան վկայական	Պատճեն
4	Ընտանքի անդամների ծննդյան վկայականներ /անձնագրեր ազգակցական կապը որոշելու համար (անհրաժեշտության դեպքում)	Պատճեն
5	Զբաղվածության և եկամուտների մասին բացված տեղեկանք Զբաղվածության և եկամուտների մասին տեղեկանք, ինչպես նաև աշխատավարձային քարտի քաղվածք Կարող է պահանջվել նաև անհատական հաշվի քաղվածք	Բնօրինակ
6	Վարկառուի/Համավարկառուի եկամուտները միասնական Նորք /Էկենգ համակարգում արտացոլվելու դեպքում, 5 -րդ կետում նշված տեղեկանք չի պահանջվում	
7	Երկրորդային եկամուտը հիմնավորող փաստաթղթեր (առկայության դեպքում)	Բնօրինակ
8	Տեղեկանք կառուցապատողից ավտոկայանատեղի վերաբերյալ	Բնօրինակ
9	Համատեղ սեփականություն հանդիսացող գույքը և (կամ) գույքային իրավունքը որպես գրավի առարկա ընդունելիս կարող է պահանջվել գույքի (գույքային իրավունքի) համասեփականատեր հանդիսացող ամուսնու/կնոջ համաձայնությունը՝ ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դրույթներին համապատասխան:	

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR)
A - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը)
n – կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը
N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը
Kn-կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը
Dn-կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

i –ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ՝

Օրինակ 1

Վարկի գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
Ժամկետ՝ 24 ամիս
Տարեկան տոկոսադրույք՝ 16%,
Տոկոսադրույքի տեսակ՝ Հաստատուն
Մարման եղանակ՝ անուիտետային/Վարկի գումարի և տոկոսագումարի ամսական հավասարաչափ վճարում/
Վարկային հայտի ուսումնասիրության վճար՝ սահմանված չէ
Վարկի տրամադրման միանվագ վճար՝ սահմանված չէ

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է՝ **17,2%**
Ամսական վճարման չափ՝ **48,963 ՀՀ դրամ**

Օրինակ 2

Վարկի գումար՝ 500,000 ՀՀ դրամ
Ժամկետ՝ 48 ամիս
Տարեկան տոկոսադրույք՝ 17%,
Տոկոսադրույքի տեսակ՝ Հաստատուն
Մարման եղանակ՝ անուիտետային/Վարկի գումարի և տոկոսագումարի ամսական հավասարաչափ վճարում/
Վարկային հայտի ուսումնասիրության վճար՝ սահմանված չէ
Վարկի տրամադրման միանվագ վճար՝ 10,000 ՀՀ դրամ

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է՝ **19,7%**
Ամսական վճարման չափ՝ **14,428 ՀՀ դրամ**

Ուշադրություն
Պայմանավորված վարկի գումարով, ժամկետով, մարումների հաճախականությամբ և այլ օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբեր լինել վերոնշյալ օրինակից :

- **Բանկը սպառողական վարկի տրամադրման հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո, նախքան սպառողական վարկի տրամադրման պայմանագրի կնքումը, Վարկառուին տրամադրում է ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ի պահանջների:**
- **Վարկառուն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե վարկային պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ): Այդ դեպքում վարկառուն պարտավոր է վարկի գումարը օգտագործելու համար Բանկին վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են վարկային պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան: Վարկային պայմանագրի լուծման հետ կապված որևէ այլ հատուցում սպառողից պահանջվել չի կարող:**
- **Վարկառուն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:**
- **ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԻՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:**
- **Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է վարկառուից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ վարկառուին (նման պահանջի առկայության դեպքում),**
- **Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը վարկառուի՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում,**
- **ՀՀ հարկային օրենսգրքի և «ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման միասնական հաշվետվողական ստանդարտ»-ի (CRS) պահանջների համաձայն՝ Բանկը կարող է ոչ ռեզիդենտ հաճախորդների հաշիվների և հարկային ռեզիդենտության վերաբերյալ որոշակի տեղեկատվություն հավաքագրել և փոխանցել ՀՀ Պետական եկամուտների կոմիտեին: Պահանջվող**

տեղեկատվությունը Բանկին չտրամադրելու դեպքում՝ Բանկը ՀՀ Հարկային օրենսգրքի պահանջներին համապատասխան ստիպված կլինի հրաժարվել (դադարեցնել) վարկառուի ֆինանսական հաշիվներով գործարքներ կատարելուց, բացառությամբ վարկառուի անունով այլ ֆինանսական հաստատությունում բացված հաշվին վարկառուին պատկանող դրամական միջոցները փոխանցելու կամ դրամական միջոցներն առձեռն վարկառուին տրամադրելու գործարքներից:

- **«Ձեր ֆինանսական տեղեկատուն» www.fininfo.am ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Վարկառուի համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է:**
- ԱՄԻՕ Մոբայլ բանկինգի վերաբերյալ տեղեկատվությունը կարող եք գտնել **այստեղ:**

Վարկային պատմության
և սքոր գնահատականի վերաբերյալ տեղեկատվություն

Վարկային պատմության էությունը

Վարկային պատմությունը հաճախորդի ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ամբողջությունն է, որը ցույց է տալիս վերջինիս ֆինանսական պարտավորությունների կամ դրանց կատարման պատմությունը:
Վարկային պատմության մեջ ներառվում են հարցման պահին նախորդող 5 տարիների վերաբերյալ տվյալները, և այն ցույց է տալիս՝

• հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների չափի, տարեկան տոկոսադրույքի, պարտավորությունների մնացորդի, դրանց դիմաց գրավադրված գույքի վերաբերյալ տեղեկատվությունը:
• հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների գծով վճարների պատմությունը, ներառյալ սահմանված ժամանակացույցից վճարումների ուշացումները
• այլ անձանց տրված երաշխավորությունները
• հաճախորդին փոխկապակցված անձանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն:

Վարկային պատմությունը չի պարունակում անձնական բնույթի տվյալներ:

Վարկային սքոր գնահատականի էությունը

Վարկային սքորը հաճախորդի սպասարկած պարտավորությունների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորված գնահատական է, որը ցույց է տալիս տվյալ հաճախորդի կողմից վարկի վերադարձելիության ռիսկն առաջիկա որոշակի ժամանակահատվածում:

Վարկային հարցման ազդեցությունը սքոր գնահատականի վրա

Կախված վարկային հարցման տեսակից՝ այն կարող է ազդել ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից կիրառվող սքորի տեսակների՝ ԱՔՌԱ սքոր և ՖԱՅԿՈ սքոր, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների կողմից կիրառվող սեփական սքոր գնահատականների վրա: Հարցումների նպատակների և վարկային սքոր գնահատականի վրա դրանց ազդեցության վերաբերյալ մանրամասները ներկայացված են ստորև աղյուսակում.

Վարկային հարցման նպատակ	**Վարկային հարցման ենթանպատակ**	**Ազդեցությունը վարկային սքորի վրա**
Նոր վարկային դիմում		Նվազեցնում է
Երաշխավոր անձ	Նոր վարկային դիմում	Նվազեցնում է
Փոխկապակցված անձ		Չի ազդում
Գործող վարկի մոնիտորինգ		Չի ազդում
Երաշխավոր անձ	• Գործող վարկ • Գործող երաշխավորի մոնիտորինգ	Չի ազդում
Այլ Բանկային ծառայություններ		Չի ազդում

Վարկային պատմության և սքոր գնահատականի կարևորությունը

Վարկային պատմությունը և սքոր գնահատականը կարևոր են, քանի որ վարկի համար դիմելուց, բանկը կամ վարկային կազմակերպությունը, մինչև վարկ տրամադրելու որոշում կայացնելը, ուսումնասիրում է դիմումատուի վարկային պատմությունն ու գնահատում, թե որքանով է պատասխանատու վերջինս՝ որպես վարկառու:

Ձևավորված Վատ վարկային պատմությունը՝ կարող է հանդիսանալ ֆինանսավորման տրամադրման մերժման պատճառ:

Սխալ կամ թերի տվյալների շտկում

Եթե հաճախորդի վարկային պատմության մեջ առկա են սխալ կամ թերի տվյալներ, ապա պարզաբանման և ուղղման նպատակով հաճախորդը կարող է այդ մասին տեղեկացնել «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ՛ ՓԲԸ-ին, այսուհետ՝ Վարկային բյուրո, կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվություն տրամադրող ֆինանսսական կազմակերպություններին: Վարկային բյուրոյին տեղեկացումը կարող է իրականացվել համապատասխան գրավոր դիմում ներկայացնելու միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ առցանց ռեժիմում «Իմ ԱՔՌԱ» անձնական գրասենյակից:

Վարկային բյուրոյի կողմից տրամադրված վարկային զեկույցների վերաբերյալ հաճախորդների բողոքների ընդունման/ստացման, քննարկման և վերջիններիս արձագանքման գործընթացը, գործողությունների հաջորդականությունը սահմանվում է «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ «Վեճերի լուծման ընթացակարգ»-ով:

Վարկային պատմության և սքոր գնահատականի բարելավման քայլեր

Վարկային պատմությունը և սքոր գնահատականը բարելավելու համար անհրաժեշտ է նախ շտկել դրանք վատթարացնող հիմնական պատճառները, մասնավորապես՝ հարկավոր է առաջին իսկ հնարավորության դեպքում արագ մարել գործող ժամկետանց պարտավորությունները, ինչպես նաև՝

- մարումները կատարել սահմանված գրաֆիկին համապատասխան՝ բացառելով ուշացումները և ցուցաբերելով ճշտապահ վարքագիծ,
- նվազեցնել տրված երաշխավորությունները՝ կրճատելով դրանց քանակը, գումարը, ինչպես նաև առկայության դեպքում ապահովելով այս մասով ժամկետանց պարտավորությունների լրիվ մարումը,
- խուսափել անվստահելի անձանց համար երաշխավոր դառնալուց,
- թեթևացնել վարկային բեռը՝ մարելով գործող վարկերը՝ մասամբ կամ ամբողջությամբ,
- խուսափել հաճախակի նոր վարկերի ստացման համար դիմելուց:

Մանրամասները՝ abcfinance.am և acra.am հղումներում: